ԴՎԻՆԻ ԱՌԱՋԻՆ (506 Թ.) ԵՎ ԵՐԿՐՈՐԴ (554/555 Թ.) ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

501 թ. պարսից թագավոր Կավատն անկախ և ինքնուրույն ճանաչեց Հայոց եկեղեցին, որը մի կողմից հակադրվեց քաղկեդոնականությանը, մյուս կողմից՝ Պարսկաստանում գերիշխող նեստորականությանը[1]:

Դեռևս Քաղեդոնի 451 թ. ժողովից հետո ծայր առած դավանաբանական վեճերը սպառնում էին պառակտել Բյուզանդական եկեղեցին և կայսրությունից անջատել նրա արևելյան պրովինցիաները: Դրա կանխելուն էին ուղղված բյուզանդական կայսրեր Զենոնի (474–491) և Անաստասի (491–518) ձեռնարկած քայլերը: Կրոնական ոլորտում Զենոնի կողմից կատարված կարևորագույն քայլ էր "Հենոտիկոնի" հրապարակումը: Բյուզանդիան բաժանված էր միաբնակների և քաղկեդոնականների միջև: Կայսրը փորձում էր նրանց համար փոխզիջման բանաձև գտնել: Խորհրդակցելով Կ. Պոլսի պատրիարք Ակակիոսի հետ՝ Զենոնը 482 թ. հուլիսի 28-ին կայսերական մի հրովարտակ հրապարակեց, որը հայտնի է "Հենոտիկոն" կամ "Միության ակտ" անվանմամբ: Դրա հիմնական գաղափարը Քաղկեդոնի ժողովի անտեսումը և նախորդ երեք տիեզերական ժողովների (Նիկիայի, Կ. Պոլսի և Եփեսոսի) ընդունած օրենքների վերաարժևորումն էր: Սակայն "Հենոտիկոնը" Քաղկեդոնի ժողովին ընդունած օրենքներին հակադրվող ոչինչ չէր պարունակում: Կարելի է ենթադրել, որ բյուզանդական կառավարությունը հույս ուներ, որ երկու կողմերը համաձայնության կգան Քրիստոսի բնությանը վերաբերվող բարդ խնդրի շուրջ:

506 թ. Անաստաս կայսրը հրովարտակ է հրապարակում, որով ազդարարում էր, որ ինքն անցնում է միաբնակների կողմը և սկսում է հալածել նեստորականներին ու քաղկեդոնականներին: Փաստորեն, "հերետիկոսների" դեմ ծավալված պայքարի ոլորտն են նաև ընդգրկվում միաբնակ եկեղեցուն հետևող հայերը, աղվաններն ու վրացիները[2]: Եթե Բյուզանդական կայսրության մեջ առավելապես հաղթանակող էին մի բնության կողմնակիցները, համաձայն "Հենոտիկոնի" սահմանած սկզբունքների, ապա Հռոմում և նրա իրավասությանը ենթարկվող քրիստոնյա Արևմուտքում անսասան էր Քաղկեդոնի ժողովի հեղինակությունը, իսկ Պարսկաստանում հանգրվանած

---

[1] М. Дьяконов. Очерк истории древнего Ирана. М., 1961, с. 306–307.

[2] *Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. II, Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Երևան, 1984, էջ 211:*

ասորի, ինչպես նաև՝ տեղի պարսիկ քրիստոնյաներն, ընդունել էին նեստորականություն[3]:

Եվ ահա 506 թ. Բաբկեն Ա Ոթմսեցի Հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ Դվինում տեղի ունեցավ եկեղեցական ժողով, որին մասնակցում էին հայոց, վրաց և աղվանից եպիսկոպոսներ, նաև՝ հայոց իշխաններ[4]. "Վասն զի ութևտասներորդ ամի Կաւատայ արքայից արքայի, մինչդեռ ես Բաբգէն Հայոց եպիսկոպոսապետ, ամենայն եպիսկոպոսաւք և վանականաւք և նախարարաւք ժողովեալ էաք յԱյրարատ գաւառ, յոստանն Հայաստան աշխարհիս ի Դուին քաղաք"[5]:

Դրանով իսկ սկիզբ էր դրվում հայության համար մի ճակատագրական վեճի, որի մեջ, ժամանակին հանգամանքների բերումով, պետք է դրսևորվեր նրա ազգային ինքնորոշումը: Կարևոր էր հատկապես այն, որ ժողովին մասնակցում էին նաև վրաց ու աղվանից հոգևորականները: Սա մի երևույթ էր, որն առաջին անգամ էր երևան գալիս Հայոց աշխարհում քրիստոնեության մուտքից հետո և ցույց էր տալիս, թե երկու դար ի վեր այս երեք հարևան ազգերն ինչ խոշոր աշխատանք էին կատարել միմյանց մերձենալու, հոգևոր-մշակութային կյանքի ընդհանուր պայմաններ ստեղծելու համար[6]:

Ժողովի բուն նպատակը պարզելու համար առաջ են քաշվել տարբեր կարծիքներ: Այսպես՝ պարզապես եկեղեցական գործերին հսկող պաշտոնական և հերթական ժողով, Հայոց, Վրաց, Աղվանից ու Սյունյաց եկեղեցական փոխադարձ հարաբերությունների ճշգրտում և բոլորի կողմից ընդունելի դավանաբանության ու նեստորականության պարզաբանում:

Դվինի ժողովն արդեն հրավիրվել էր, երբ Սիմեոն Բեթ-Արշամացու գլխավորությամբ Պարսկաստանի քրիստոնյա ուղղափառ ասորիները, որոնց, հատկապես, Սելևկիայի 499 թ. ժողովից (որտեղ նեստորականությունը հռչակվել էր Պարսկաստանի քրիստոնյաների պաշտոնական դավանություն) հետո հալածանքների էին ենթարկել նեստորականները, պաշտպանություն են հայցել Հայ եկեղեցուց: Բաբկեն Ա Ոթմսեցին, ի պատասխան այդ խնդրանքի, Հայոց եկեղեցու և ժողովի անունից հավաստել է, որ Հայոց եկեղեցին Նեստորի ու նրա կողմնակիցների վարդապետությունը մերժում է և նզովում: Կաթողիկոսը երկու մասից բաղկացած մի թուղթ է գրում հայերենով և պարսկերենով, որը կնքվում է բոլոր ժողովականների ստորագրութ-

---

[3] *Կ. Մելիքյան. Հայոց եկեղեցու դիրքն Ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում IV–VI դարի I կեսին, Երևան, 2016, էջ 185:*

[4] *Տե՛ս Ե. Տէր-Մինասեան. Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 44:*

[5] *Գիրք Թղթոց, Մատեանագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 42:*

[6] *Լ. Ե ո. Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1967, էջ 141:*

յամբ և կոչվում է "Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս"[7]: Այդտեղ նշվում է. "Եկեալ հասին առ մեզ արք ոմանք, որք ասացին զինքեանս լինել ի կողմանցդ յայդցանէ, ի Տեսբոնէ և ի Գարմիկանէ և ի Վեհարտաշիր նահանգէ, ծանուցանելով մեզ ստուգագոյն զանուանս և զտեղիս բնակութեան իւրեանց..."[8]:

Ըստ Ե. Տեր-Մինասյանի, ժողովի գումարման պատճառներ կարող էին լինել մի կողմից ներքին խնդիրները, մյուս կողմից՝ Զենոնի "Հենոտիկոն"-ի ընդունումն ու դրանով Քաղկեդոնի որոշումների լռելյայն մերժումը: Պետք է կարծել, որ այս ժամանակ են հայերն ընդունել "Հենոտիկոն"-ը: Դրա վառ ապացույցն է հակաքաղկեդոնական հայտնի աստվածաբան Սիմեոն Բեթ-Արշամացու նամակը Մծբինի եպիսկոպոս Բարծումային, որտեղ նշվում է, որ այդ ժողովի ժամանակ են հայերն իրենց 32 եպիսկոպոսի և մարզպանի հետ ընդունել Զենոնի "Հենոտիկոն"-ը[9]:

Տեղին է նաև հիշատակել Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումը Դվինի 506 թ. ժողովի մասին. "...իսկ ապա զկնի ի սմին յայսմ ժամանակի բարեպաշտութեան աշխարհին Հոռոմոց՝ մեծ հայրապետն Հայոց Բաբգէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Վրաց և Աղուանից ի Նոր քաղաքի ի սուրբ կաթուղիկէի ի մայրն եկեղեցեաց Հայոց, որք նմանապէս... խոտեցին զժողովն Քաղկեդոնի ... ի նմին հիման սրբոյն Գրիգորի հաստատեալ կային: Եւ այսպէս յայսմ ժամանակի մի հաւատ բարեպաշտութեան առհասարակ հաստատեալ լինէր յաշխարհին Հոռոմոց, Հայոց, Վրաց և Աղուանից՝ հաւասար ամենեցունց ... ի բաց ընկեցեալ զժողովն Քաղկեդոնի"[10]: Այս հաղորդումից ակներև է դառնում, որ Քաղկեդոնի ժողովի ընդունած որոշումների մերժումը Դվինի 506 թ. ժողովի գումարման շարժառիթներից էր:

Բաբկեն Ա Ոթմսեցին թղթի երկրորդ մասում բանադրում է նեստորական պարագլուխներին. "Եւ նզովեմք զՆեստորիոս, և զԱրիոս, զԹեոդորոս, զԱկակ..., որք ի Պարսից աշխարհի զնոցուն զկանոն և զհաւատ, զարմատսն դառնութեան, ի վեր երևեալս, յորոց բազումք նեղեալ արտաքս հալածեցան, ի ճշմարտութենէն սերման որսմամբ, առ ի նոցանէ մշակեալք"[11]:

Կաթողիկոսն անդրադառնում է նաև Ընդհանրական քրիստոնեական եկեղեցու դավանությանը. "Ամեցեալ տակաւին ևս առ նոսին մոլորութիւն վտանգեցուցանէ զճշմարիտ հաւատ ... և ոչ դադարեաց մինչև ցայսօր ժամանակի, ալեկոծեալ սուրբ ե-

---

[7] http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_Armenian_Religion_Dvini_Yekeghetsakan_Zhoghovner

[8] *Գիրք Թղթոց, էջ 42:*

[9] *Ե. Տ ե ր - Մ ի ն ա ս յ ա ն. Պատմա-բանասիրական հետազոտություններ, էջ 41, 358:*

[10] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոց Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 62:*

[11] *Գիրք Թղթոց, էջ 50:*

կեղեցի, ի ժողովոյն Քաղկեդովնի զաւրացեալ”: Քաղկեդոնի ժողովի մասին նշվում է. “Եւ փախչիմք ուրացեալ զի Քաղկեդոնին ստութիւն Նեստորի և այլոցն նմանից...”[12]*:*

Այսպիսով, Հայոց եկեղեցու առաջին մասնակցությունը դավանական վեճերին կապված է Բաբկեն Ա Ոթմսեցու անվան հետ: 506 թ. Դվինի ժողովը դրեց Ընդանրական քրիստոնեական եկեղեցուց արդեն իսկ դավանաբանորեն տարանջատ Հայոց ազգային ինքնուրույն եկեղեցու հաստատուն հիմքը: Հայոց եկեղեցին ամրապնդում է ավանդական հին կարգերը, որոնք միանգամայն տարբերվում էին հունական, ասորական և հռոմեական եկեղեցու հաստատած կարգերից[13]*: Դվինի 506 թ. ժողովը երևույթ էր Հայոց եկեղեցու դավանական կողմնորոշման հստակեցման և զարգացման, նրա հականեստորական ու հակաքաղկեդոնական ուղեգծի ամրակայացման գործում: Այն միաժամանակ Հայոց եկեղեցու հեղինակության և ինքնուրույնության ապացույցն էր:*

Չմոռանանք նշել, որ 506 թ. Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև կնքված հաշտության պայմանագրի համաձայն՝ Հայաստանը կրկին ընկավ վասալական կախման մեջ Սասանյան Պարսկաստանից: Դրանով իսկ դարձավ մարզպանություն՝ մտնելով Պարսից թագավորության “Հյուսիսային Քուստակի” մեջ:

518 թ. մահացավ բյուզանդական Անաստաս կայսրը, որին հաջորդեց Հուստինոս I-ը (518–527): Վերջինս կայսրության ներսում վերականգնեց դավանաբանական վեճերը և իրեն հայտարարեց քաղկեդոնական ուղղափառության կողմնակից: Իրականում նա ցանկանում էր միավորել Հռոմն ու Բյուզանդիան և վերականգնել ժամանակի հզոր Հռոմեական կայսրությունը: Նրա օրոք Բյուզանդական կայսրության մեջ լայնածավալ հալածանքներ սկսվեցին միաբնակների նկատմամբ, և շուրջ 50 միաբնյա եպիսկոպոսներ զրկվեցին իրենց աթոռներից ու աքսորվեցին[14]*: Նրանց թվում էին նաև Հալիկառնասի եպիսկոպոս Հուլիանոսը և Անտիոքի պատրիարք Սևերոսը: Երբ երկուսն էլ զրկվեցին աթոռներից և տեղափոխվեցին Ալեքսանդրիա, նրանց մեջ մեծ վեճ ծագեց այն է՝ արդյո՞ք Հիսուսի կենդանության օրոք նրա մարմինն անապական է եղել, թե՞՝ ապականացու: Սևերոսը պաշտպանում էր վերջին կարծիքը, իսկ Հուլիանոսը՝ առաջին: Ըստ Հուլիանոսի, Հիսուսի մարմինը չէր ենթարկվում մարդկային կարիքներին (քաղց, ծարավ, քուն, արտասուք և այլն): Սևերոսն էլ պնդում էր, որ Հիսուսի մարմինն ապականացու է եղել՝ նման մարդկային մարմնի: Այս պատճառով էլ Հուլիանոսի հետևորդները կոչվում են երևութականներ, իսկ Սևերոսինը՝ ապականացու պաշտողներ:*

Հայոց եկեղեցին մասնակցություն է ունեցել այդ վեճին և բռնել է ծայրահեղ միաբնակ Հուլիանոսականների կողմը: Այն սերտ հարաբերության մեջ է եղել Հուլիանոսյան

---

[12] Կ. Մ ե լ ի ք յ ա ն. նշվ. աշխ., էջ 189:

[13] Նույն տեղում, էջ 181, 194:

[14] Լ ե ո. նշվ. աշխ., էջ 156–157:

և Սեբրյան ասորիների հետ, թեև երկու ուղղությունների առաջնորդները՝ Հուլիանոսն ու Սեբրոսը, հետագայում նզովվում են հայ աստվածաբանների կողմից. ի դեպ՝ Սեբրոսն արդեն Զ դարից[15]: Ինչևէ, Հուստինոս I-ի ձեռնարկած աքսորներն ու հալածանքները, սակայն, արդյունք չտվեցին. բացի այդ, նա չկարողացավ կապեր հաստատել Արևմուտքի հետ: Իրավիճակն ավելի վատացավ, և միաբնակներին իր դեմ հանեց, որոնք էլ բռնեցին պայքարի բացահայտ ուղին[16]:

Հուստինոս I կայսրից հետո գահին է բազմում նրա գահակից Հուստինիանոս I-ը (527–565): Միասնական պետություն, միասնական օրենք և միասնական ուղղափառ եկեղեցի. ահա այն հիմնական երեք կետերը, որոնց վրա հիմնված էր Հուստինիանոս I-ի վարած արտաքին ու ներքին քաղաքականությունը: Կայսրը, սենատորներից և արիստոկրատիայի այլ ներկայացուցիչներից հողեր բռնագրավելով, դրանք նվիրաբերում էր եկեղեցուն՝ ջանալով այն դարձնել իր զորեղ հենարանը[17]:

Երբ Հուստինիանոսը գահ բարձրացավ, Բյուզանդիան գտնվում էր տնտեսական և քաղաքական շատ ծանր վիճակում: Այդ պատճառով կայսրը մի շարք հրովարտակների միջոցով ձեռնամուխ եղավ սահմանային շրջաններում ռազմական ու վարչական փոփոխություններ կատարել: Այդ փոփոխությունները մեծ ազդեցություն ունեցան նաև հայ բնակչության վրա: Բյուզանդական լծի տակ ճնշված հայերը՝ իրենց հակաբյուզանդական տրամադրությունները ցույց տալու նպատակով, մասնակցում էին հակաքաղկեդոնական շարժումներին: Ինչպես հայտնի է Հովհան Եփեսացու "Արևելյան սրբեր" աշխատությունից, Հուստինիանոսի ժամանակ կայսրության արևելյան սահմաններում միաբնակների շարժման գլխավոր ղեկավարներից էր Արշակունիների սերնդի ներկայացուցիչ Թովման: Բյուզանդիայի ներսում եկեղեցական հարցերը կարգավորելու նպատակով, կայսրն այնպիսի պայմաններ ստեղծեց, որ իր կինը՝ Թեոդորա թագուհին, հանդես գա որպես միաբնակների հովանավոր, իսկ ինքը՝ քաղկեդոնականների: Թագուհին իր Հորմիստաս պալատը տրամադրել էր միաբնակներին, որտեղ գործունեություն էին ծավալում մոտ հազար վանական[18]: 527–528 թթ. Հուստինիանոսը օրենքներ է ընդունում հեթանոսների, հրեաների, հերետիկոսների, հավատուրացների դեմ և սկսում կատաղի հալածանքներ այլադավանների նկատմամբ: Բացառություն էին կազմում միայն արիոսական գոթերը, ովքեր զինվորական ծառայություն էին մատուցում կայսրությանը: Հերետիկոսները մեծ զրկանքներ էին

---

[15] Ե. Տէր-Մինասեան. *Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 2009, էջ 75, 77, 78:*

[16] *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8, Ասորական աղբյուրներ Ա (այսուհետ՝ Ասորական աղբյուրներ), թարգմ. բնագ., առաջ. և ծանոթ. Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 325:*

[17] История Византии в трех томах, т. I. М., 1967, с. 267–269.

[18] *Ասորական աղբյուրներ, էջ 325–327:*

կրում կայսրության մեջ: Կայսրը կարծում էր, որ արդար է, եթե Բյուզանդիայի ներսում ուղղափառներն ավելի լայն հնարավորություններ ունենան, քան՝ հերետիկոսները: Վերջիններս նաև իրավունք չունեին ստրուկ պահել, և եթե օրենքը խախտվում էր, ապա ստրուկին ազատություն էր տրվում[19]: Հերետիկոսների նկատմամբ իրականացրած հետապնդումներն ոչ միայն դժգոհություններ բարձրացրեցին կայսրության ներսում, այլև զանգվածային արտագաղթի առիթ հանդիսացան:

536 թ. մարտի 18-ին հրատարակած 31-րդ նովելլայի երկրորդ գլխում Հուստինիանոս կայսրը նշում է, որ իր կառավարությունը Բյուզանդական Հայաստանի եկեղեցական կարգում որևէ նոր բան չի նախատեսում: Սակայն կայսրությունն ամեն կերպ ջանում էր քաղկեդոնականություն տարածել նաև այնտեղ:

Հուստինիանոսը չկարողացավ հաշտեցնել կայսրության սահմաններում բնակվող քաղկեդոնականներին ու միաբնակներին, և եկեղեցական միասնություն ստեղծելու նրա գաղափարն այդպես էլ երազանք մնաց[20]:

553 թ. մայիսի 5-ին Կոստանդնուպոլսի սուրբ Սոֆիայի տաճարում Հուստինիանոսի նախաձեռնությամբ գումարվեց 5-րդ տիեզերական ժողովը, որին մասնակցում էին 168 եպիսկոպոս[21]: Ժողովը վերահաստատեց 451 թ. Քաղկեդոնում կայացած 4-րդ տիեզերական ժողովի որոշումները, այդ թվում՝ Լևոն պապի առաջադրած հավատո բանաձևը: Դրանք ընդունելու դեպքում Հայոց եկեղեցին կախման մեջ էր ընկնելու Բյուզանդիայի կայսերականացված եկեղեցուց՝ որդեգրելով քաղկեդոնական դավանանքը[22]: Միաբնակությանը հավատարիմ հույներն այդուհետ հեշտությամբ համակերպվում էին Քաղկեդոնի դավանությանը: Հայոց եկեղեցին, հաստատուն մնալով իր դավանաբանական համոզման մեջ, պահպանեց իր ինքնուրույնությունը: VI դ. սկզբին՝ 506 թ., այն իր վերաբերմունքն արդեն իսկ արտահայտել էր քրիստոնեական դավանաբանության վերաբերյալ՝ հաստատապես դրսևորելով դավանական իր դիրքորոշումը հօգուտ ուղղադավան միաբնակության: Դարի II կեսին էլ, ի նկատի առնելով կայսրության սահմաններում տեղի ունեցող եկեղեցական իրադարձությունները, անհրաժեշտաբար բացահայտ հանդես եկավ ընդդեմ քաղկեդոնականության[23]:

VI դ. երկրորդ կեսին Հայոց եկեղեցու կյանքում տեղի ունեցավ մի շատ կարևոր իրադարձություն: Դա Դվինի երկրորդ եկեղեցական ժողովն էր, որը գումարել էր Ներսես Բագրևանդցի կաթողիկոսը: Ժամանակագրական առումով ժողովին տարբեր թվականներ են վերագրում, սակայն հավատարիմ ենք մնում "Գիրք Թղթոց"-ի ընձե-

---

[19] История Византии в трех томах, т. I, с. 270–273.

[20] *Նույն տեղում, էջ 281:*

[21] J. N o r w i c h. Byzantium-the Early Centuries, New York, 1989, p. 257.

[22] *Վ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Հայոց եկեղեցին՝ նախարարական պետականության հենարան (428–630-ական թթ.).– ՀՀ ԳԱԱ "Լրաբեր հասարակական գիտությունների", 2015, - 1, էջ 220:*

[23] *Կ. Մ ե լ ի ք յ ա ն. նշվ. աշխ., էջ 199–200:*

ռած տեղեկությանը, որտեղ հավաստվում է, որ "Վասն այսորիկ հարկեցաք առնել զմիաբանութիւնս զայս համաշխարհական, մեք ամենայն Հայք, ի քսան եւ չորրորդ ամի Խոսրովու արքայից արքայի, ի սուրբ քառասներորդսն, ի կիրակէի Իւղոգոմեան"[24]: Այսինքն՝ ժողովը գումարվել է Խոսրով թագավորի կառավարման 24-րդ տարում՝ 554/555 թ.[25] (նա գահակալել է հոր մահից անմիջապես հետո): Թե որքան մեծ կարևորություն ուներ այդ ժողովը երկրի համար, վկայում է նրա կազմը. "Եւ ոչ ոք արտաքոյ մնաց յաշխարհականաց ի յայս ի կամաւոր գործոյ, ի քահանայից, ի վանականաց, ի ժողովրդականաց, ի բարետոհմից և յամենայն շինականաց"[26]: Ժողովին մասնակցում էր նաև 35 նախարար: Արծարծված առանցքային հարցը նեստորականության վերաբերվող խնդիրն էր, որի անվան տակ հայերը նկատի ունեին նաև քաղկեդոնականներին, ովքեր նեստորականների պես երկու բնության սկզբունքն էին ընդունում: Միաբնակությունը, ինչպես և ամեն մի հակաբյուզանդական աշխարհայացք, խրախուսվում էր պարսից արքա Խոսրով Անուշիրվանի կողմից[27]:

Ժողովին մասնակցում էր նաև միաբնակ ասորիների Աբդիշո եպիսկոպոսը: Համաձայն "Գիրք Թղթոցի", որը, անկասկած, պարունակում է կաթողիկոսարանում կազմված արժանահավատ, պաշտոնական փաստաթղթերը, մի խումբ միաբնակ ասորիներ գրությամբ դիմում են Հայոց Ներսես Բագրևանդցի կաթողիկոսին՝ խնդրելով եպիսկոպոս ձեռնադրել "Աբդիսոյ երէց ի վանաց Սարեբայի": Միաժամանակ ներկայացնում են հավատո մի խոստովանություն, որի մեջ ներկայացված էր իրենց դավանանքը, նաև նզովք ուղղված Լևոն պապի հավատո բանաձևին ու Քաղկեդոնի ժողովին: Քրիստոսի մարմնի մասին ասվում էր. "Մարմինն որ ի մեզէ առաւ անապականութիւն էր, եւ փառաւոր ի նմանէ միութենէ"[28]: Գիրք Թղթոցից նաև տեղեկանում ենք, որ Հայոց կաթողիկոսն ու եպիսկոպոսները ձեռնադրում են Աբդիշոյին. "Ի մեծապատիւ աստիճան քահանայապետութեան, ամենայն եպիսկոպոսաւք աշխարհիս հանդերձ քահանայիւք եւ վանականաւք եւ ուխտիս սրբոյ եկեղեցւոյ. կամաւք ազատաց, աշխարհականաց եւ համաւրէն ժողովրդականաց"[29]: Ձեռնադրությունից հետո Աբդիշոն վերադառնում է Ասորիք՝ հետը տանելով մի գրություն, որում Հայոց եկեղեցու նվիրապետությունը լիակատար համերաշխություն էր հայտնում միաբնակ ասորի-

---

[24] *Գիրք Թղթոց, էջ 72:*

[25] *"Բազմավէպ" (Վենետիկ), 1957, - 5–6, էջ 117: Վ. Վարդանյանը ժողովի թվականը համարում է 554 թ. (տե՛ս Վ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 242): Կ. Մելիքյանն ընդունում է 555 թ. (տե՛ս Կ. Մ ե լ ի ք յ ա ն. նշվ. աշխ., էջ 205):*

[26] *Գիրք Թղթոց, էջ 74:*

[27] *Լ ե ո. նշվ. աշխ., էջ 159–160:*

[28] *Գիրք Թղթոց, էջ 57:*

[29] *Նույն տեղում, էջ 57–58:*

ների դավանությանը[30]*: Ըստ* “Narratio de rebus Armeniae”*քաղկեդոնական աղբյուրի՝ Աբդիշոն եպիսկոպոս է ձեռնադրվում Դվինի երկրորդ ժողովի ժամանակ: Այս վկայությունը, սակայն, չի համապատասխանում պատմական իրողությանը, քանի որ դեռ ժողովից առաջ ձեռնադրվելով՝ նա ժողովին մասնակցում էր արդեն իբրև եպիսկոպոս և Հայոց եկեղեցու նվիրապետության անդամ: Աբդիշոն առաջնակարգ տեղ էր գրավում Ներսես կաթողիկոսի ժողովական փաստաթղթում թվարկված եպիսկոպոսների շարքում*[31]*:*

Ասորի Աբդիշոն եպիսկոպոս ձեռնադրվելու համար դիմեց Հայոց եկեղեցու օգնությանը, քանի որ մոտ էր Տարոնի Ներշապուհ եպիսկոպոսի հետ: Վերջինս մեծ հեղինակություն էր վայելում Հայոց եկեղեցու նվիրապետության մեջ, և այդ էր պատճառը, որ Աբդիշոն դյուրությամբ եպիսկոպոս ձեռնադրվեց. “Զայդ ամենայն հաւատ ստուգիւ լուեալ զհաստատունս եւ ճշմարիտ գտաք զձեզ հաւատով, որով հնազանդեցաք եւ հաւանեցաք հրամանի ձերում եւ վկայութեամբ ձերով ձեռնադրեցաք զայրդ ընտրեալ ի ձեզէ զԱբդիսոյ ի մեծապատիւ աստիճան քահանայապետութեան”[32]*:*

Վերոգրյալից կարելի է արձանագրել, որ Ներսես կաթողիկոսը Դվինում երկու ժողով է գումարել՝ մեկը ամենայն հավանականությամբ 551 թ. Աբդիշոյին ձեռնադրելու համար, իսկ մյուսը 554/555 թ. Դվինի երկրորդ եկեղեցական ժողովն էր[33]*: Եթե Աբդիշոյին ձեռնադրելու ժողովին Ներսես կաթողիկոսն ակնհայտ նզովում էր Լևոնի տոմարը և Քաղկեդոնի ժողովը, ապա երկրորդ ժողովին վերաբերող նյութերում ոչ մի խոսք չենք գտնի ժողովի հակաքաղկեդոնական ուղղվածության մասին: Սակայն պատմական աղբյուրներում վկայված է, որ Աբդիշո ասորին հայտնի հակաքաղկեդոնական էր, ուստի նրա ձեռնադրության հարցը հասարակ ծիսական գործընթաց չէր, այլ իրենից ներկայացնում էր դավանական լուրջ խնդիր: Եթե հայերն այդ նույն դավանանքին չլինեին, ապա հանձն չէին առնի նրա ձեռնադրումը*[34]*: Ըստ “Գիրք Թղթոցի”՝ Դվինի երկրորդ եկեղեցական ժողովն անցել է հակաքաղկեդոնական մթնոլորտում. “Զայս ժողով արար Տէր Ներսէս հակառակ ժողովոյն Քաղկեդոնի, վասնզի էր ախտ պղտորման խոստովանութեան Քաղկեդոնի յաճախապէս յաւելեալ ևս քան զևս յոյժ յոյժ երկաբնակ հաւատն, եւ սկզբնաւորեալ Տէր Ներսէս սահմանադրութիւնս վճիռ տալով, եւ եղեալ միաւորութիւն խոստովանութեան, հաստատելով նախ առաջին զծննդեանն եւ զմկրտութեանն միաւորելով յոյժ ստիպմամբ հաստատութեամբ անխզելի եւ անորոշաբար կանոնաւ վասն երկուց բնութեանցն միաւորելով զմիու-*

---

[30] *Կ. Մ ե լ ի ք յ ա ն. նշվ. աշխ., էջ 206:*

[31] *Տե՛ս Գիրք Թղթոց, էջ 73:*

[32] *Նույն տեղում, էջ 57–58:*

[33] *Նույն տեղում:*

[34] *“Բազմավէպ”, 1958, - 3–5, էջ 66:*

թիւն ունելով սրբեցին դարձեալ զԽաչեցարն յերիս սրբասացութիւնս, ընդդէմ բաժանման նոցա վասն Քրիստոսի միաւորեալ բնութեանցն՝[35]:

Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի ընթացքում նեստորականության և քաղկեդոնականության մերժումից բացի, այլ որոշումներ ևս ընդունվեցին: Դրանցից առավել կարևորներն էին Սուրբ Երրորդության երգասացության՝ "որ խաչեցար վասն մեր" հավելման ընդունումը և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի պատրիարքությունների հետ ունեցած դավանաբանական միաբանությունից հրաժարումը: "Խաչեցար" հավելման իրական հեղինակն Անտիոքի միաբնակ պատրիարք Պետրոս Թափիչն էր (468–470, 475–488), ով իր պատրիարքական իրավասություններն ստանձնելու առաջին տարիներին կարգադրում է պատարագում սրբասացության երգին կցել վերոնշյալ հավելումը, որի համար դատապարտվում և բանադրանքի է ենթարկվում Հռոմի Ֆելիքս III պապի ու մի քանի եպիսկոպոսի կողմից[36]: "Խաչեցարը" ընդունելու կամ չընդունելու համար թե՛ քաղկեդոնականները, թե՛ միաբնակներն առաջ էին քաշում իրենց հիմնավորումներն ու արդարացումները: Սակայն մինչև Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը հայկական դավանաբանական մի շարք փաստաթղթերում "Սուրբ Աստուած" երգասացության մեջ հիշատակվում է "որ խաչեցար վասն մեր" հավելում-արտահայտությունը[37]: Ժողովի կողմից "խաչեցար"-ի հավելման ընդունումը վկայող աղբյուրները չեն փաստում, թե միաբնակությանը բնորոշ այս հավելումն անծանոթ էր Հայոց եկեղեցու նվիրապետությանը Դվինի այս ժողովից առաջ, որը պաշտոնապես ընդունեց դրա կիրառումն ի դեմս Սուրբ Երրորդության, իսկ մինչ այդ այն կիրառվում էր պատարագներում[38]:

Դվինի ժողովի մյուս կարևոր որոշումը, ինչպես ասվեց, վերաբերում էր Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքությունների հետ ունեցած դավանաբանական միաբանությունից հրաժարվելուն, որն իր արտացոլումն է գտել "Հովհաննես առ Աբաս" վավերաթղթում: Այն հանգամանքը, որ ժողովը կարևոր էր համարել արգելել Երուսաղեմ գնալը, ցույց է տալիս, թե որքան մեծ հեղինակություն ուներ սուրբ քաղաքը հայերի համար և կարևոր էր խույս տալ նրա ազդեցությունից: Երուսաղեմի Հովհաննես պատրիարքն իր թղթում ընդգծում է, որ, ծանոթանալով Դվինի ժողովի ընդունած որոշումներին և դրանցում գտնելով մոլոր վարդապետություն, հրամայել է հայերին հալածել Երուսաղեմից ու նրանց վանքն այրել. "… զչար որոմունս մշակութեան իւրեանց մինչև այսր սերմանեցին: Զորս ես նզովեցի և հալածեցի և քաղաքս

---

[35] *Գիրք Թղթոց, էջ 221:*

[36] *Կ. Մելիքյան. նշվ. աշխ., էջ 227:*

[37] *Գիրք Թղթոց, էջ 53:*

[38] *Կ. Մելիքյան. նշվ. աշխ., էջ 228–229:*

դեռ այրէր զվանսն մի Հայոց”[39]: Հայ ուխտավորները միայն VII դարի սկզբից են սկսում կրկին գնալ Երուսաղեմ ու հաստատվել այնտեղ: Հայերի ուխտագնացությունը չափազանց ուրախացրել էր Երուսաղեմի պատրիարքի տեղապահ Մոդեստոսին, ով Հայոց Կոմիտաս կաթողիկոսին (613–628) ուղղած իր թղթում հայերի այցը Երուսաղեմ համարում էր Աստծո մխիթարություններից մեկը. “Աւրհնեալ է Աստուած... որ մխիթարեաց զմեզ մխիթարութեամբ բազմաւ ի վերայ ամենայն նեղութեանց մերոց ի գալստեան ձերոյ հաւտիդ”[40]:

Այսպիսով, Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի ընդունած որոշումներով Հայոց եկեղեցին վերջնականապես խզեց Բյուզանդական կայսրության պաշտոնական եկեղեցու հետ իր հոգևոր առնչությունը: Ընդունված որոշումներին եղան նաև ընդդիմադիրներ: Դրա վառ ապացույցն է Ներսես կաթողիկոսի “Մեղադրության թուղթը”, որն ուղղված է այն ինը հայ եպիսկոպոսներին, ովքեր ներկա չէին եղել Աբդիշոյի ձեռնադրության համար գումարված 551 թ. ժողովին: Այդ վանականները Վասպուրական նահանգի կամ Հայաստանի հարավային սահմանագլխի եպիսկոպոսներ էին: Ներսես կաթողիկոսը նրանց ծուլություն ու անհոգություն է վերագրում՝ գրելով. “Եւ ձեր ոչ ունելով զնախանձ վասն Աստուծոյ հեղգացեալ սպուժեցէք, եւ ի ձեր առնելոյ՝ բազում գործ եկեղեցւոյ մնաց”[41]: Ինը եպիսկոպոսից երեքը, սակայն, մասնակցում են Դվինի երկրորդ ժողովին և ստորագրում “Ուխտ միաբանութեան” թուղթը: Ներսես կաթողիկոսը կարգադրում է, որ նրանք ժողովի ընդունած որոշումները տանեն և հասցնեն իրենց շրջանները: Ըստ այմ՝ կարելի է ենթադրել, որ Դվինի ժողովի որոշումներին, մասնավորապես, ընդդիմադիր էին Հայաստանի հարավային շրջաններում:

Ներսեսին հաջորդած Հովհաննես կաթողիկոսը (557–574) ձեռնամուխ եղավ շարունակելու նրա գործը և Դվինի ժողովի որոշումները հասցնելու մինչև Աղվանից ու Սյունյաց աշխարհներ: Սակայն այնտեղ իրենց եպիսկոպոսներով հանդերձ կողմնակից չէին Դվինի երկրորդ ժողովի որոշումներին: Հովհաննես կաթողիկոսն այս աշխարհներ երկու նամակ է ուղարկում, որոնց մեջ տեղի հոգևորականներին կոչ է անում նեստորականներից զատ զգուշանալ նաև քաղկեդոնականներից[42]:

Այսպիսով, Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի կողմից Քաղկեդոնի ժողովի որոշումների մերժումը մեկ վայրկյանի գործ չէր, այլ աստվածաբանական մտածո-

---

[39] Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի Թուղթն առ Աբաս Աղուանից կաթողիկոս. հրատարակութեամբ Կ. Տէր-Մկրտչեանի, Վաղարշապատ, 1896, էջ 3:

[40] Մ ե բ ե ռ ս. Պատմութիւն, քննական բնագիրը՝ Գ. Աբգարյանի, թարգմ., առաջ. և ծանոթ.՝ Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի, Երևան, 2005, էջ 156: Տե՛ս նաև Կ. Մ ե լ ի ք յ ա ն. նշվ. աշխ., էջ 235:

[41] Տե՛ս Գիրք Թղթոց, էջ 70:

[42] “Բազմավէպ”, 1958, - 3–5, էջ 69–70:

դության և կողմնորոշման տնական գործընթացի հետևանք էր[43]: Ժողովը բեկումնային նշանակություն ունեցավ Հայոց եկեղեցու պատմության հետագա ողջ ժամանակաշրջանի համար: Այստեղ վերստին դրսևորվեց եկեղեցու և նախարարների միասնությունը, շեշտվեց Հայոց եկեղեցու դավանական ինքնորոշումը և որոշվեց չշեղվել ուղղադավան հավատքից: Դվինի երկրորդ ժողովը պարզապես վավերացրեց Դվինի առաջին ժողովի ընդունած որոշումները, որոնց գաղափարախոսության հիմքում ընկած էր Հայոց եկեղեցու պաշտոնական բաժանումը Քաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունած Ընդհանրական եկեղեցուց: Դավանական այս կողմնորոշումը նորություն չէր Հայոց եկեղեցու համար, քանզի այն սրբագրվել էր երկուսուկես դարերի ընթացքում:

ПЕРВЫЙ (506 Г.) И ВТОРОЙ (554/555 Г.) ЦЕРКОВНЫЕ СОБОРЫ В ДВИНЕ И ПРИНЯТЫЕ ИМИ РЕШЕНИЯ

АРМЕН ТЕР-ГРИГОРЯН

Резюме

По причине церковных споров, возникших в V веке, были проведены первый и второй церковные соборы в Двине, в VI веке, в ходе которых Армянская церковь заняла свою официальную позицию, подчеркивая свое религиозное самоопределение и подвергая отлучению сторонников несторианства и халкидонского вероисповедания. Эти соборы имели решающее значение для всей последующей церковной истории Армении.

THE FIRST (506) AND THE SECOND (554/555) CHURCH COUNCILS HELD IN DVIN AND THEIR DECISIONS

ARMEN TER-GRIGORYAN

Summary

Because of church disputes having arisen in the 5th century the first and the second church councils were held in Dvin in the 6th century, in which the Armenian Church took its official position emphasizing its religious self-determination and execrating the Nestorianism and the Chalcedonism supporters. These meetings were of crucial importance for the entire period of the Armenian Church history.

---

[43] *Կ. Մելիքյան. նշվ. աշխ., էջ 221–222:*